

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/13 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	<p>Ներկայացուցչական վերարկու - 70 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայրի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների բրդյա ձմեռային վերարկուն (Նկար 8) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) մահուդե կտորից է, երկփեշ, լանջափեշերը՝ կտրվածքով: Ձևվածքն ունի վերին հատվածում կիսա նստած, դեպի փեշը լայնացող ուրվագիծ, առաջամասում՝ լանջափեշերին, իրար զուգահեռ տեղադրված են 22 մմ տրամագծով 11 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներ (Նկար 83), օձիքը՝ սուրանկյուն կտրվածքով, հետ ծավիղ, հետնամասը՝ երկու կարով, կարերի ներքևի հատվածում՝ բացվածքով, հետնամասում՝ կողակարերից դուրս եկող 5 սմ լայնությամբ իրանածիգ գոտի, վրան՝ 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով եզրակարված, սուրանկյուն եզրերով ավարտվող, 22 մմ տրամագծով 2 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներով (Նկար 83) կոճկվող, 20 սմ երկարությամբ և 5 սմ լայնությամբ ներկարված դեկորատիվ գոտի: Թևքերը՝ երկկարանի, դաստակի հատվածում՝ կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Առաջամասում՝ 15 սմ բացվածքով, 6 սմ լայնությամբ կափույրով 2 ներկարված ուղիղ գրպան: Օձիքի ստորին հատվածը, լանջափեշերի կտրվածքը և գրպանների կափույրները՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Ձախ թևի վրա, ուսակարից 9սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերարկուի երկարությունը՝ 96-106 սմ (ըստ չափ/հասակի): Վերարկուի կտորը՝ 80 տոկոս բրդի և 20 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 550 գր/քմ ±5% խտությամբ, աստառը կարմիր</p>

(գունային կողը՝ #19-1557TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն իրար զուգահեռ կարվում են օձիքի առաջամասի վերին հատվածին: Ներկայացուցչական տարազաբաճկոն - 70 հատ մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայրի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ներկայացուցչական տարազաբաճկոնը (Նկար 10) մուգ կապույտ (գունային կողը՝ #19-3921TPG) կտորից է, երկփեշ: Ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ, գոտկատեղի հատվածում՝ նստեցման կարեր, առաջամասում՝ լանջափեշերին, իրար զուգահեռ տեղադրված են 22 մմ տրամագծով 7 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներ (Նկար 83), օձիքը՝ սուրանկյուն կտրվածքով, հետ ծալվող, հետնամասը՝ երկու կարով, կարերի ներքևի հատվածում՝ բացվածքով, հետնամասում՝ կողակարերից դուրս եկող 5 սմ լայնությամբ իրանածիգ գոտի, վրան՝ 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG) եզրաքուղով եզրակարված, սուրանկյուն եզրերով ավարտվող, 22 մմ տրամագծով 2 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներով (Նկար 83) կոճկվող, 20 սմ երկարությամբ և 5 սմ լայնությամբ ներկարված դեկորատիվ գոտի: Թևքերը՝ երկկարանի, դաստակի հատվածում՝ կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Առաջամասում՝ 14 սմ բացվածքով, 6 սմ լայնությամբ կափուլյրով 2 ներկարված ուղիղ գրպան: Կրծքավանդակի աջակողմյան հատվածում՝ 8 սմ լայնությամբ ներկարված գրպան՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Տարազաբաճկոնի լանջափեշերը, օձիքի ստորին հատվածը և գրպանների կափուլյրները՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Տարազաբաճկոնի երկարությունը՝ 62-72 սմ (ըստ չափ/հասակի): Տարազաբաճկոնի կտորը՝ 67 տոկոս բրդի և 33 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 317 գր/քմ $\pm 5\%$ խտությամբ, աստառը կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն իրար զուգահեռ կարվում են օձիքի առաջամասի վերին հատվածին: Ներկայացուցչական կիսաշրջագգեստ - 70 հատ մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայրի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ներկայացուցչական կիսաշրջագգեստը (Նկար 11) բաց մոխրագույն (գունային կողը՝ #15-4101) կտորից է՝ ուղիղ, նստեցված ուրվագծով, ձախ կողմից՝ բաց մոխրագույն (գունային կողը՝ #154101) գաղտնի շղթայով և մետաղական կեռիկով կոճկվող, հետնամասում՝ բացվածքով: Առաջամասի ձախակողմյան հատվածը՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Գոտու լայնությունը՝ 4 սմ, առաջամասում՝ 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կողը՝ #19-1557TPG) եզրաքուղով եզրակարված, սուրանկյուն եզրերով ավարտվող, 22 մմ տրամագծով 2 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր

կոճակներով (Նկար 83) կոճկվող, 20 սմ երկարությամբ և 4 սմ լայնությամբ ներկարված դեկորատիվ գոտի: Գոտու
ներսի հատվածում՝ պիտակ (Նկար 87): Կիսաշրջագծեստի երկարությունը՝ 64-74սմ (ըստ չափ/հասակի):
Կիսաշրջագծեստի կտորը՝ 67 տոկոս բրդի և 33 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 317 գր/քմ $\pm 5\%$ խտությամբ, աստառը բաց
մոխրագույն (գունային կոդը #15-4101)՝ պոլիէսթերի ատլասից: Ներկայացուցչական վերնաշապիկ - 70 հատ
Մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայորի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների
ներկայացուցչական վերնաշապիկը (Նկար 12) սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG) կտորից է: Ձևվածքն ունի
կիպ նստած ուրվագիծ: Առաջամասում կոճկվում է 7-10 սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG) պլաստմասսայե
կոճակով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծավլող, կրծքամասի ձախ հատվածում՝ 12 սմ լայնությամբ և 13 սմ
երկարությամբ վրադիր գրպան՝ շերտակարով, թևքերը՝ երկար, երկուական սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG)
պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծավլող թեզանիքներով: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87):
Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 175 գր/քմ $\pm 5\%$ խտությամբ: Մաքսային
ծառայության փոխգնդապետի ու մայորի լամբակ (կարվող) - 140 գույգ Մաքսային ծառայության փոխգնդապետի ու
մայորի լամբակներն ուղղանկյուն են: Չափերը՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ, մակերեսը՝ մուգ կապույտ
(գունային կոդը՝ #19-3921TPG) գործվածքով և երկու ոսկեգույն մակաշերտով: Լամբակների վրա տեղադրվող
աստղեր 18 մմ տրամագծով - 320 հատ Լամբակների վրա տեղադրվող ոսկեգույն, 18 մմ տրամագծով մետաղական
հնգաթև աստղեր (Նկար 82): ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին»
ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի: ** Գնման առարկայի բնութագիրը բավարարում է մեկից ավելի
հնարավոր մասնակիցների և արտադրողների: *** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:
Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: ****
1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի մեջ ներառված յուրաքանչյուր տեսակի
ապրանքի համար մատակարարը պետք է ներկայացնի մեկ միավորի գինը (աղյուսակը կցի Հավելված 1-ին՝ Դիմում
Հայտարարությանը), որը համամասնորեն կնվազեցվի պատվիրատուի կողմից՝ աճուրդի ընթացքում հաստատված
վերջնական գնին համապատասխան: Միավոր գների աղյուսակը՝ Հավելված 1,1-ը կցվում է: ***** 1-ից 12-րդ
չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի մեջ ներառված համազգեստի վրա պետք է լինի
համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային
հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների
տեսքով): ***** 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմ պետք է ունենա առանձին
փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի լրակազմի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման
ամիսն ու տարեթիվը, լրակազմի մեջ մտնող յուրաքանչյուր բաղադրիչի անվանումը, չափսը և քանակը: Լրակազմի

փաթեթավորման մեջ ներառվող լամբակների վրա աստղերը պետք է համապատասխանաբար ամրացված լինեն:
5-ից 8-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի փաթեթավորման մեջ չեն ներառվում համազգեստի բաղկացուցիչ պարագաներից կոշիկները, կիսաճոքավոր կոշիկները և բարձրակրունկ կոշիկները, որոնցից յուրաքանչյուր գույզը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ***** 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմում ներառված համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որն պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ***** Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցմանը ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասանագիտական խմբի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: ***** Համազգեստի և համազգեստի բաղկացուցիչ պարագաների չափսերը լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում, մատակարարի էլ.-փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ***** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԵՍՃԱՊՁԲ-2023/13 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	